

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ 2021-2022 ՈՒՍՏԱՐՎԱ ՀԵՏԱԶՈՏՈՂԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ (ՀԱՅՑՈՐԴՈՒԹՅՈՒՆ) ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ

Հետազոտողի կրթական ծրագրով (հայցորդություն) ուսուցման համար կարող են դիմել մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի (ինգամյա կրթություն) կրթական աստիճան ունեցող անձինք՝ առանց տարիքային սահմանափակման:

Ընդունելությունն իրականացվում է հետևյալ բնագավառներին համապատասխան մասնագիտություններով՝

Դասիչ	Բնագավառ
Ա.00.00	Ֆիզիկամաթեմատիկական գիտություններ
Է.00.00	Պատմական գիտություններ
Ժ.00.00	Բանասիրական գիտություններ
ԺԳ.00.00	Մանկավարժական գիտություններ

և հետևյալ մասնագիտություններով՝

Դասիչ	Մասնագիտություն
Գ.00.04	Կենսաքիմիա
Ը.00.02	Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում
ԻԴ.03.01	Աշխարհագրություն

Դիմորդների փաստաթղթերն ընդունվում են ՇՊՀ-ի Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնում սույն թվականի սեպտեմբերի 9-ից հոկտեմբերի 29-ը աշխատանքային օրերին ժամը 10⁰⁰ – 17⁰⁰:

Անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

1. դիմում ռեկտորի անունով (լրացվում է տեղում),
2. անձնագրի և սոցիալական քարտի բնօրինակներ և պատճեններ (բնօրինակները հետ են վերադարձվում դիմումը լրացնելուց հետո),
3. ինքնակենսագրություն,
4. երեք լուսանկար՝ 3x4 չափի,
5. [անձնական թերթիկ](#),
6. բակալավրի և մագիստրոսի կամ դիպլոմավորված մասնագետի դիպլոմների ու դրանց հավելվածների բնօրինակներ և պատճեններ (բնօրինակները հետ են վերադարձվում դիմումը լրացնելուց հետո) (օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին),
7. ընտրված մասնագիտությամբ հրատարակված առնվազն մեկ գիտական աշխատանքի պատճեն կամ առնվազն 20 տպագրական էջի սահմաններում գիտական ռեֆերատ՝ մասնագիտական ամբիոնի գրավոր դրական գրախոսականի հետ միասին,
8. [գիտական ղեկավարի գրավոր համաձայնություն գիտական ղեկավարման վերաբերյալ](#),
9. քաղվածք աշխատանքային գրքույկից (առկայության դեպքում),
10. քաղվածք համապատասխան ամբիոնի նիստի արձանագրությունից՝ եզրակացություն-երաշխավորությամբ:

Հարցերի և մանրամասների համար դիմել ՇՊՀ-ի Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոն:

Էլ. հասցե՝ shsu.science@gmail.com

Հեռ.՝ (0312) 6 64 80, (+374) 93 00 63 21